## *1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ*

### *1.4.1. Զբաղվածություն*

#### *1.4.1.1. Զբաղվածության ցուցանիշների գնահատումն ըստ աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների*

Զեկույցի այս հատվածում ներկայացված են աշխատանքի շուկայի 2018-2019թթ. I եռամսյակի հիմնական ցուցանիշները՝ գնահատված աշխատուժի հետազոտության արդյունքներով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) և (կամ) Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներին և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Ստորև ներկայացվում են հետազոտության վերաբերյալ մեթոդաբանական որոշ պարզաբանումներ:

**Հետազոտության ընտրանքային հիմնական միավորները** մասնավոր տնային տնտեսություններն (ՏՏ) են:

**Հետազոտվող միավորը** 15-75 (ներառյալ) տարեկան անձինք են, ովքեր.

ա) սովորաբար բնակվում են տվյալ ՏՏ-ում.

բ) ժամանակավորապես (**մինչև 3 ամիս**) չեն բնակվում տվյալ ՏՏ-ում՝ գտնվելով ՀՀ մեկ այլ բնակավայրում կամ երկրից դուրս.

գ) գտնվում են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

**Դիտարկվող ժամանակաշրջանը** տարվա բոլոր ամիսներն են:

**Հետազոտվող ժամանակահատվածը** հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին օրացուցային **շաբաթն** է՝ երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ):

Ընտրանքային համակցության ամսական չափը կազմում է 649 ՏՏ, եռամսյակայինը՝ 1 947 ՏՏ, իսկ տարեկանը՝ 7 788 ՏՏ՝ ընդգրկելով ք. Երևանը և հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերը:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն յուրաքանչյուր հարցվող ըստ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի դասակարգվում է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված կամ գործազուրկ կամ աշխատուժից դուրս բնակչություն**:

Ստորև ներկայացվող ցուցանիշների մեթոդաբանական հիմքը Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի[1] առանցքային դրույթներն են: 19-րդ ԱՎՄՀ շրջանակում.

- **Ընդլայնվել է** «աշխատանքային գործունեություն» հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ **վճարվող** և **չվճարվող** աշխատանքների: Ըստ նոր սահմանման, **աշխատանքային գործունեությունը ցանկացած տարիքի և սեռի անձանց կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության օրինականությունից:** Ընդ որում, «զբաղվածությունը» համարվում է աշխատանքի հինգ ձևերից մեկը, որն իրականացվում է այլոց համար՝ **վարձատրության կամ եկամտի դիմաց:**

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. **Զբաղվածություն**՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.**

2ա. **սեփական սպառման համար ապրանքների արտադրություն** (օրինակ՝ հողագործական, անասնապահական ապրանքների արտադրություն՝ անմիջապես սպառման կամ պահեստավորման համար, սեփական տան կառուցում, կապիտալ նորոգում, կահույքի պատրաստում, հագուստի կարում, գործում, վառելափայտի հավաքում, պահեստավորում և այլն).

*2ա1. Սննդամթերքի բնահրային արտադրություն (օրինակ՝ հողագործության, բուսաբուծության, անասնապահական, անասնաբուծական ապրանքների արտադրություն, ձկնորսություն, հավաքչություն և այլն).*

2բ. **սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում** (օրինակ՝ չվճարվող տնային գործեր, ընտանիքի ծեր / հիվանդ / մանկահասակ անդամի խնամք և այլն).

3. **Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա**՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.
4. **Կամավոր աշխատանք**՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.
5. **Այլ աշխատանք**՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

**Աշխատանքային գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱԺԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում (տե՛ս 78-79 էջերի աղյուսակները):**

---

[1] Բնօրինակը՝ Resolution concerning statistics of work, employment and labour underutilization, Adopted by the Nineteenth International Conference of Labour Statisticians (October 2013) http://www.ilo.org/global/statistics-and-databases/meetings-and-events/international-conference-of-labour-statisticians/19/WCMS_230304/lang--en/index.htm
Բնօրինակի պաշտոնական թարգմանությունը՝ Резолюция I 19 Международной конференции статистиков труда (на русском языке), ссылка на сайт Международной организации труда (МОТ), http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/normativeinstrument/wcms_235603.pdf

Աշխատուժի թերօգտագործումը (ԱԹ) բնութագրող ցուցանիշներն են[1]:

1. **ԱԹ1**. Գործազրկության մակարդակ.
2. **ԱԹ2.** Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության[2] (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. **ԱԹ3.** Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. **ԱԹ4.** Աշխատուժի թերօգտագործման ազրեգացված ցուցանիշ:

Զբաղվածության ցուցանիշի սահմանան համաձայն. «Զբաղված համարվում են 15-75 տարեկան անձինք, ովքեր հետազոտվող շաբաթում եկամուտ / աշխատավարձ ստանալու նպատակով **գոնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**»:

Առավել մանրամասն մեթոդաբանական պարզաբանումները ներկայացված են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբեր» զեկույցի «1.4.1.1. Զբաղվածություն» ենթահատվածում (https://www.armstat.am/file/article/sv_12_18a_141.pdf), ինչպես նաև ՀՀ ՎԿ կայքի http://www.armstat.am/file/doc/99508493.pdf հասցեում՝ շնորհանդեսի ձևաչափով:

**Ստորև ներկայացված ցուցանիշները դեռևս նախնական են**:

[1] Տե՛ս գծապատկեր 1-ը, էջ 76

[2] Զբաղված անձինք են, ովքեր աշխատել են նորմալ աշխատաժամանակից պակաս, որովհետև չեն կարողացել գտնել լրիվ աշխատանքային օր տևողությամբ աշխատանք կամ աշխատաժամանակը կրճատվել է գործատուի նախաձեռ նությամբ, սակայն ցանկացել և պատրաստ են եղել փոխել իրենց աշխատանքային վիճակը:

### Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, I եռամսյակ
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | 2018թ. | 2019թ. | *Փոփոխությունը* |
|---|---|---|---|
| | *1000 մարդ* | | *%* |
| ***Աշխատանքային ռեսուրսներ*** | **2 034.5** | **2 065.6** | ***101.5*** |
| տղամարդ | 926.2 | 949.7 | *102.5* |
| կին | 1 108.3 | 1 115.9 | *100.7* |
| քաղաք | 1 239.0 | 1 263.1 | *101.9* |
| գյուղ | 795.5 | 802.5 | *100.9* |
| ***Աշխատուժից դուրս բնակչություն*** | **902.0** | **906.6** | ***100.5*** |
| տղամարդ | 318.2 | 314.2 | *98.7* |
| կին | 583.7 | 592.4 | *101.5* |
| քաղաք | 553.5 | 556.0 | *100.5* |
| գյուղ | 348.5 | 350.7 | *100.6* |
| ***Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)*** | **1 132.3** | **1 158.9** | ***102.3*** |
| տղամարդ | 607.7 | 635.4 | *104.6* |
| կին | 524.6 | 523.5 | *99.8* |
| քաղաք | 685.3 | 707.1 | *103.2* |
| գյուղ | 447.0 | 451.8 | *101.1* |
| ***Զբաղվածներ*** | **894.8** | **905.3** | ***101.2*** |
| տղամարդ | 474.6 | 483.2 | *101.8* |
| կին | 420.1 | 422.1 | *100.5* |
| քաղաք | 502.4 | 513.7 | *102.2* |
| գյուղ | 392.3 | 391.6 | *99.8* |
| ***Գործազուրկներ*** | **237.6** | **253.6** | ***106.7*** |
| տղամարդ | 133.1 | 152.2 | *114.4* |
| կին | 104.4 | 101.4 | *97.1* |
| քաղաք | 182.9 | 193.4 | *105.7* |
| գյուղ | 54.7 | 60.2 | *110.1* |

**Բնակչության տնտեսական ակտիվությունը I եռամսյակ**
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | 2018թ. | 2019թ. | *Փոփոխությունը* |
|---|---|---|---|
| | % | | *(+/-)* |
| ***Աշխատուժի մասնակցության մակարդակ[1]*** | **55.7** | **56.1** | ***0.4*** |
| տղամարդ | 65.6 | 66.9 | *1.3* |
| կին | 47.3 | 46.9 | *-0.4* |
| քաղաք | 55.3 | 56.0 | *0.7* |
| գյուղ | 56.2 | 56.3 | *0.1* |
| ***Զբաղվածության մակարդակ[1]*** | **44.0** | **43.8** | ***-0.2*** |
| տղամարդ | 51.2 | 50.9 | *-0.4* |
| կին | 37.9 | 37.8 | *-0.1* |
| քաղաք | 40.5 | 40.7 | *0.1* |
| գյուղ | 49.3 | 48.8 | *-0.5* |
| ***Գործազրկության մակարդակ[2]*** | **21.0** | **21.9** | ***0.9*** |
| տղամարդ | 21.9 | 24.0 | *2.1* |
| կին | 19.9 | 19.4 | *-0.5* |
| քաղաք | 26.7 | 27.4 | *0.7* |
| գյուղ | 12.2 | 13.3 | *1.1* |

Գծապատկեր 1. Աշխատուժի թերօգտագործման չափման շրջանակը
(հիմքը՝ 19-րդ ԱՎՄՀ բանաձև)




[1] Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

[2] Հաշվարկված է աշխատուժի թվաքանակի նկատմամբ:

## Աշխատուժի թերօգտագործում, և թերօգտագործման մակարդակ, I եռամսյակ

(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | 2018թ. | 2019թ. | *Փոփոխությունը* |
|---|---|---|---|
| | *1000 մարդ* | | *%* |
| ԱԹ1. Գործազրկություն | 237.6 | 253.6 | *106.7* |
| ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված ցուցանիշ | 271.5 | 271.6 | *100.0* |
| ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված ցուցանիշ | 466.2 | 502.7 | *107.8* |
| ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ագրեգացված ցուցանիշ | 500.2 | 520.7 | *104.1* |
| Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածություն | 34.0 | 18.0 | *52.9* |
| Երկարատև գործազրկություն | 126.1 | 129.6 | *102.8* |
| | *%* | | +/- |
| ԱԹ1. Գործազրկության մակարդակ[1], % | 21.0 | 21.9 | *0.9* |
| ԱԹ2. Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության և գործազրկության զուգորդված մակարդակ[1], % | 24.0 | 23.4 | *-0.6* |
| ԱԹ3. Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ[2], % | 34.3 | 35.7 | *1.4* |
| ԱԹ4. Աշխատուժի թերօգտագործման ագրեգացված ցուցանիշ[2], % | 36.8 | 37.0 | *0.2* |
| Թերզբաղվածության մակարդակ[3], % | 3.8 | 2.0 | *-1.8* |
| Երկարատև գործազրկության մակարդակ[4], % | 53.1 | 51.1 | *-2.0* |

## Աշխատուժի թերօգտագործման մակարդակներ, I եռամսյակ




[1] Հաշվարկված է աշխատուժի թվաքանակի նկատմամբ:
[2] Հաշվարկված է աշխատուժի և պոտենցիալ աշխատուժի թվաքանակների հանրագումարի նկատմամբ:
[3] Հաշվարկված է զբաղվածների թվաքանակի նկատմամբ:
[4] Հաշվարկված է գործազուրկների թվաքանակի նկատմամբ:

**Աշխատանքային գործունեության մեջ ներգրավված բնակչությունն[1]**
**ըստ աշխատանքի ձևերի, I եռամսյակ**
(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | Ընդամենը, *1 000 մարդ* | | *Բնակչության մասնակցության մակարդակը[2], %* | |
|---|---|---|---|---|
| | 2018թ. | 2019թ. | *2018թ.* | *2019թ.* |
| Զբաղվածություն | 894.8 | 905.3 | *44.0* | *43.8* |
| Չվարձատրվող աշխատանքային պրակտիկա | 9.1 | 4.5 | *0.4* | *0.2* |
| Սեփական սպառման համար ապրանքների արտադրության աշխատանքային գործունեություն | 423.2 | 454.7 | *20.8* | *22.0* |
| Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրման աշխատանքային գործունեություն | 1 524.2 | 1 534.3 | *74.9* | *74.3* |
| Կամավոր աշխատանք | 219.6 | 263.7 | *10.8* | *12.8* |

**Աշխատանքային գործունեության ձևերում բնակչության մասնակցության մակարդակը, %. 2019թ. I եռամսյակ**




[1] Նույն մարդը միաժամանակ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:
[2] Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:

**Սննդամթերքի բնաիրային արտադրությամբ զբաղված բնակչություն, I եռամսյակ**

(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | 2018թ. | 2019թ. | *Փոփոխությունը* |
|---|---|---|---|
| | *1000 մարդ* | | *%* |
| **Ընդամենը** | 344.2 | 358.3 | *104.1* |
| Զբաղվածներ | 231.9 | 227.6 | *98.1* |
| Գործազուրկներ | 17.3 | 18.5 | *107.0* |
| Աշխատուժից դուրս մնացած բնակչություն | 94.9 | 112.3 | *118.3* |

**Աշխատանքային ռեսուրսների բաշխումն ըստ չվճարվող աշխատանքային գործունեության ձևերի, I եռամսյակ**

(Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն)

| | Ընդամենը[1], *%* | | Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն | | Կամավոր աշխատանք | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2018թ. | 2019թ. | 2018թ. | 2019թ. | 2018թ. | 2019թ. |
| Աշխատանքային ռեսուրսներ | *100* | *100* | *100* | *100* | *100* | *100* |
| Զբաղված | 50.4 | 54.0 | 57.6 | 57.3 | 39.6 | 49.4 |
| Գործազուրկ | 10.1 | 8.9 | 7.0 | 6.2 | 13.3 | 12.9 |
| Աշխատուժից դուրս բնակչություն | 31.4 | 37.1 | 32.6 | 36.5 | 29.2 | 37.7 |

[1] Անկախ աշխատաշուկայում մասնակցության աստիճանի, մարդը կարող է ներգրավված լինել չվճարվող աշխատանքային գործունեության ձև(եր)ում:

### *1.4.1.2. Գործազրկության ցուցանիշներն ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալների*

Աշխատուժի առաջարկը, 2019թ.

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատանք փնտրողներ | | *նրանցից՝ գործազուրկներ* | |
|---|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| Հունվար | 81 914 | 96.0 | 64 618 | 92.6 |
| Փետրվար | 82 426 | 97.5 | 65 103 | 94.1 |
| Մարտ | 82 718 | 99.1 | 64 955 | 95.0 |
| Ապրիլ | 83 029 | 100.5 | 64 647 | 93.9 |
| Մայիս | 82 825 | 100.5 | 64 128 | 93.5 |
| Հունիս | 82 522 | 99.7 | 63 400 | 92.7 |

Աշխատուժի առաջարկն ըստ սեռի, 2019թ.

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատանք փնտրողներ | | | | *նրանցից՝ գործազուրկներ* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կին | | տղամարդ | | կին | | տղամարդ | |
| | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| Հունվար | 54 211 | 96.9 | 27 703 | 94.5 | 43 108 | 92.8 | 21 510 | 92.3 |
| Փետրվար | 54 601 | 98.5 | 27 825 | 95.7 | 43 404 | 94.3 | 21 699 | 93.8 |
| Մարտ | 54 760 | 100.0 | 27 958 | 97.3 | 43 245 | 94.9 | 21 710 | 95.2 |
| Ապրիլ | 54 897 | 101.6 | 28 132 | 98.6 | 43 017 | 94.0 | 21 630 | 93.6 |
| Մայիս | 54 843 | 101.7 | 27 982 | 98.3 | 42 716 | 93.8 | 21 412 | 93.1 |
| Հունիս | 54 714 | 101.0 | 27 808 | 97.2 | 42 264 | 93.2 | 21 136 | 91.8 |

Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի և սեռի, 2019թ. հունիս



## Առաջին անգամ աշխատանք փնտրողներն ըստ կրթության, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Ընդամենը | | Կին | | Տղամարդ | |
|---|---|---|---|---|---|---|
| | մարդ | % | մարդ | % | մարդ | % |
| **Ընդամենը** | **26 825** | **100** | **17 037** | **100** | **9 788** | **100** |
| Հետբուհական, բարձրագույն | 3 299 | 12.3 | 2 281 | 13.4 | 1 018 | 10.4 |
| Թերի բարձրագույն, միջին մասնագիտական | 4 274 | 15.9 | 3 235 | 19.0 | 1 039 | 10.6 |
| Նախամասնագիտական (արհեստագործական) | 1 100 | 4.1 | 637 | 3.7 | 463 | 4.7 |
| Միջնակարգ ընդհանուր | 15 645 | 58.3 | 9 594 | 56.3 | 6 051 | 61.8 |
| Հատուկ ընդհանուր | 9 | 0.0 | 9 | 0.1 | 0 | 0.0 |
| Հիմնական ընդհանուր | 2 250 | 8.4 | 1 175 | 6.9 | 1 075 | 11.0 |
| Տարրական ընդհանուր | 248 | 0.9 | 106 | 0.6 | 142 | 1.5 |
| *ընդամենից՝* երիտասարդներ (16-29 տարեկաններ) | 10 298 | 38.4 | 6 939 | 40.7 | 3 359 | 34.3 |
| 30 տարեկան և բարձր | 16 527 | 61.6 | 10 098 | 59.3 | 6 429 | 65.7 |

## Աշխատանք փնտրողների կազմն ըստ սեռի, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Ընդամենը | | Կին | | Տղամարդ | |
|---|---|---|---|---|---|---|
| | մարդ | % | մարդ | % | մարդ | % |
| **Ընդամենը** | **82 522** | **100** | **54 714** | **100** | **27 808** | **100** |
| *նրանցից՝* | | | | | | |
| զբաղվածներ | 18 641 | 22.6 | 12 173 | 22.2 | 6 468 | 23.3 |
| տարիքային կենսաթոշակի տարիքը լրացած անձինք | 480 | 0.6 | 277 | 0.5 | 203 | 0.7 |
| **գործազուրկներ** | **63 400** | **76.8** | **42 264** | **77.2** | **21 136** | **76.0** |
| *այդ թվում՝* | | | | | | |
| հաշմանդամություն ունեցող | 2 471 | 3.0 | 1 045 | 1.9 | 1 426 | 5.1 |
| հաշմանդամություն չունեցող | 60 929 | 73.8 | 41 219 | 75.3 | 19 710 | 70.9 |

## Աշխատանք փնտրողներն ըստ սեռի, 2019թ. հունիս



## Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատանք փնտրողներ | | *նրանցից՝ գործազուրկներ* | | |
|---|---|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենի նկատմամբ, % |
| **Ընդամենը** | **82 522** | **99.7** | **63 400** | **92.7** | **100** |
| ք. Երևան | 12 470 | 97.6 | 8 581 | 86.9 | 14.4 |
| Արագածոտն | 4 393 | 93.1 | 3 282 | 92.3 | 5.2 |
| Արարատ | 7 676 | 106.6 | 5 439 | 92.7 | 8.6 |
| Արմավիր | 8 048 | 111.3 | 5 980 | 101.3 | 8.6 |
| Գեղարքունիք | 5 746 | 96.5 | 4 681 | 92.5 | 7.4 |
| Լոռի | 9 976 | 108.1 | 9 400 | 106.9 | 12.9 |
| Կոտայք | 8 992 | 90.0 | 6 321 | 80.2 | 11.5 |
| Շիրակ | 15 528 | 98.5 | 11 825 | 90.9 | 19.0 |
| Սյունիք | 3 371 | 97.6 | 2 868 | 92.7 | 4.5 |
| Վայոց ձոր | 1 228 | 98.7 | 922 | 98.5 | 1.4 |
| Տավուշ | 5 094 | 98.2 | 4 101 | 93.5 | 6.4 |

## Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. հունիս

*%-ով նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ*



## 16-29 տարեկան աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատանք փնտրող երիտասարդներ | | *նրանցից՝ գործազուրկներ* | | |
|---|---|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենի նկատմամբ, % |
| **Ընդամենը** | **18 614** | **98.4** | **13 441** | **89.6** | **100** |
| ք. Երևան | 2 314 | 106.4 | 1 433 | 101.9 | 10.7 |
| Արագածոտն | 1 074 | 97.5 | 682 | 96.5 | 5.1 |
| Արարատ | 2 123 | 109.7 | 1 456 | 93.7 | 10.8 |
| Արմավիր | 1 684 | 107.6 | 1 145 | 96.1 | 8.5 |
| Գեղարքունիք | 1 261 | 92.6 | 986 | 85.2 | 7.3 |
| Լոռի | 2 288 | 102.2 | 2 061 | 100.3 | 15.3 |
| Կոտայք | 1 989 | 95.5 | 1 448 | 83.6 | 10.8 |
| Շիրակ | 3 776 | 94.2 | 2 509 | 81.3 | 18.7 |
| Սյունիք | 676 | 93.0 | 506 | 86.8 | 3.8 |
| Վայոց ձոր | 328 | 99.7 | 242 | 94.9 | 1.8 |
| Տավուշ | 1 101 | 79.2 | 973 | 76.6 | 7.2 |

## Աշխատուժի առաջարկն ըստ տարիքային խմբերի, 2019թ. հունիս




## Գործազուրկներն ըստ տարիքային խմբերի, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Ընդամենը | | Կին | | Տղամարդ | | Քաղաք | | Գյուղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % |
| **Ընդամենը** | **63 400** | **100** | **42 264** | **100** | **21 136** | **100** | **40 654** | **100** | **22 746** | **100** |
| 16 -19 | 567 | 0.9 | 419 | 1.0 | 148 | 0.7 | 418 | 1.0 | 149 | 0.7 |
| 20 - 24 | 4 702 | 7.4 | 3 151 | 7.5 | 1 551 | 7.3 | 3 101 | 7.6 | 1 601 | 7.0 |
| 25 - 29 | 8 172 | 12.9 | 5 700 | 13.5 | 2 472 | 11.7 | 5 531 | 13.6 | 2 641 | 11.6 |
| 30 - 34 | 8 751 | 13.8 | 6 159 | 14.6 | 2 592 | 12.3 | 5 558 | 13.7 | 3 193 | 14.0 |
| 35 - 44 | 17 292 | 27.3 | 11 434 | 27.1 | 5 858 | 27.7 | 11 081 | 27.3 | 6 211 | 27.3 |
| 45 - 54 | 12 688 | 20.0 | 7 886 | 18.7 | 4 802 | 22.7 | 7 824 | 19.2 | 4 864 | 21.4 |
| 55 > | 11 228 | 17.7 | 7 515 | 17.8 | 3 713 | 17.6 | 7 141 | 17.6 | 4 087 | 18.0 |

## Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ կրթության, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Ընդամենը | | Կին | | Տղամարդ | | Քաղաք | | Գյուղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % |
| **Ընդամենը** | **63 400** | **100** | **42 264** | **100** | **21 136** | **100** | **40 654** | **100** | **22 746** | **100** |
| Հետբուհական, բարձրագույն | 8 439 | 13.3 | 6 396 | 15.1 | 2 043 | 9.7 | 7 036 | 17.3 | 1 403 | 6.2 |
| Թերի բարձրագույն, միջին մասնագիտական | 11 463 | 18.1 | 9 409 | 22.3 | 2 054 | 9.7 | 9 004 | 22.1 | 2 459 | 10.8 |
| Նախամասնագիտական (արհեստագործական) | 3 535 | 5.6 | 2 086 | 4.9 | 1 449 | 6.9 | 2 725 | 6.7 | 810 | 3.6 |
| Միջնակարգ ընդհանուր | 34 278 | 54.1 | 21 549 | 51.0 | 12 729 | 60.2 | 18 816 | 46.3 | 15 462 | 68.0 |
| Հիմնական ընդհանուր | 4 968 | 7.8 | 2 538 | 6.0 | 2 430 | 11.5 | 2 805 | 6.9 | 2 163 | 9.5 |
| Հատուկ ընդհանուր | 2 | 0.0 | 2 | 0.0 | 0 | 0.0 | 2 | 0.0 | 0 | 0.0 |
| Տարրական ընդհանուր | 715 | 1.1 | 284 | 0.7 | 431 | 2.0 | 266 | 0.7 | 449 | 2.0 |

## Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակն ըստ աշխատանք փնտրելու տևողության և սեռի, 2019թ հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Գործա-զուրկներ, *մարդ* | *այդ թվում* ըստ աշխատանք փնտրելու տևողության | | | | | **Անավարտ** գործազրկության միջին տևողությունը, *ամիս* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մինչև 3 ամիս | 4 - 6 ամիս | 7 - 11 ամիս | 1 - 3 տարի | 3> տարի | |
| **Ընդամենը** | **63 400** | **4 615** | **4 738** | **6 708** | **17 367** | **29 972** | ***33.5*** |
| Կին | 42 264 | 2 829 | 3 113 | 4 587 | 10 889 | 20 846 | ***34.3*** |
| Տղամարդ | 21 136 | 1 786 | 1 625 | 2 121 | 6 478 | 9 126 | ***32.1*** |

*%-ով համապատասխան սեռը ընդամենի նկատմամբ*



### Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը

| | Ընդամենը, *մարդ* | | % | |
|---|---|---|---|---|
| | 2018թ. | 2019թ. | 2018թ./2017թ. | 2019թ./2018թ. |
| Հունվար | 70 010 | 64 631 | 86.9 | 92.3 |
| Փետրվար | 69 476 | 64 861 | 86.0 | 93.4 |
| Մարտ | 68 777 | 65 029 | 85.1 | 94.6 |
| Ապրիլ | 68 633 | 64 801 | 85.6 | 94.4 |
| Մայիս | 68 717 | 64 388 | 87.0 | 93.7 |
| Հունիս | 68 459 | 63 764 | 88.4 | 93.1 |

### Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը՝ աճողական

| | Ընդամենը, *մարդ* | | % | |
|---|---|---|---|---|
| | 2018թ. | 2019թ. | 2018թ./2017թ. | 2019թ./2018թ. |
| Հունվար | 70 010 | 64 631 | 86.9 | 92.3 |
| Հունվար-փետրվար | 69 743 | 64 746 | 86.5 | 92.8 |
| Հունվար-մարտ | 69 421 | 64 840 | 86.0 | 93.4 |
| Հունվար-ապրիլ | 69 224 | 64 830 | 85.9 | 93.7 |
| Հունվար-մայիս | 69 122 | 64 742 | 86.1 | 93.7 |
| Հունվար-հունիս | 69 012 | 64 579 | 86.5 | 93.6 |

### Խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողները, 2019թ.

| | Տարեսկզբից, *մարդ* | Հունիսի վերջի դրությամբ | |
|---|---|---|---|
| | | *մարդ* | ընդամենի նկատմամբ, % |
| **Ընդամենը** | **80 847** | **15 789** | **100** |
| *այդ թվում՝ ստացել են խորհրդատվություն հետևյալ հարցերով.* | | | |
| աշխատանքի և զբաղվածության օրենսդրության | 19 809 | 3 875 | 24.5 |
| մասնագիտական կողմնորոշման | 9 706 | 1 645 | 10.4 |
| զբաղվածության ծրագրերի | 28 456 | 6 364 | 40.3 |
| աշխատանքի փոփոխման | 4 668 | 787 | 5.0 |
| այլ հարցերով | 18 208 | 3 118 | 19.7 |

## Աշխատուժի պահանջարկը[1] և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, 2019թ.

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատուժի պահանջարկը | | Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը[2] | |
|---|---|---|---|---|
| | *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| Հունվար | 2 219 | 132.2 | 37 | 72.5 |
| Փետրվար | 2 224 | 135.4 | 31 | 60.8 |
| Մարտ | 2 557 | 145.9 | 32 | 66.7 |
| Ապրիլ | 3 350 | 185.5 | 25 | 54.3 |
| Մայիս | 4 032 | 201.7 | 21 | 51.2 |
| Հունիս | 3 583 | 137.7 | 23 | 71.9 |

## Աշխատուժի պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը, հունիս




## Աշխատուժի պահանջարկը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| | Աշխատուժի պահանջարկը | *% / անգամ* | |
|---|---|---|---|
| | ընդամենը, *մարդ* | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, | ընդամենի նկատմամբ |
| **Ընդամենը** | **3 583** | **1.4 անգամ** | **100** |
| ք. Երևան | 1 982 | 1.9 անգամ | 55.3 |
| Արագածոտն | 190 | 1.5 անգամ | 5.3 |
| Արարատ | 91 | 1.7 անգամ | 2.5 |
| Արմավիր | 62 | 1.7 անգամ | 1.7 |
| Գեղարքունիք | 50 | 102.0 | 1.4 |
| Լոռի | 133 | 83.1 | 3.7 |
| Կոտայք | 371 | 70.7 | 10.4 |
| Շիրակ | 357 | 104.1 | 10.0 |
| Սյունիք | 97 | 100.0 | 2.7 |
| Վայոց ձոր | 99 | 2.2 անգամ | 2.8 |
| Տավուշ | 151 | 119.8 | 4.2 |

[1] Այստեղ և հետայսու՝ վերաբերում է միայն ՀՀ զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործատուների ներկայացրած պահանջարկին:
[2] Աշխատանք փնտրողների թվաքանակն է մեկ թափուր աշխատատեղի հաշվով:

## Աշխատուժի պահանջարկն ըստ ամիսների

*ամսվա ընթացքում*

| | Ընդամենը, *մարդ* | | *այդ թվում՝ թափուր աշխատատեղեր* | | | | %, ընդամենը աշխատուժի պահանջարկի նկատմամբ, 2019թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կրկնվող[1] | | չկրկնվող | | Ընդամենը | կրկնվող աշխատա-տեղեր | չկրկնվող աշխատա-տեղեր |
| | 2018թ. | 2019թ. | 2018թ. | 2019թ. | 2018թ. | 2019թ. | | | |
| Հունվար | 2 319 | 3 004 | 1 803 | 2 356 | 516 | 648 | 100 | 78.4 | 21.6 |
| Փետրվար | 2 239 | 3 148 | 1 659 | 2 320 | 580 | 828 | 100 | 73.7 | 26.3 |
| Մարտ | 2 367 | 3 613 | 1 585 | 2 377 | 782 | 1 236 | 100 | 65.8 | 34.2 |
| Ապրիլ | 2 511 | 4 425 | 1 811 | 2 472 | 700 | 1 953 | 100 | 55.9 | 44.1 |
| Մայիս | 2 753 | 5 039 | 1 934 | 3 769 | 819 | 1 270 | 100 | 74.8 | 25.2 |
| Հունիս | 3 402 | 5 298 | 2 012 | 4 248 | 1 390 | 1 050 | 100 | 80.2 | 19.8 |

## Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2019թ. հունիս

*ամսվա ընթացքում*

| ՏԳՏԴ (խմբ. 2) | | Չկրկնվող թափուր աշխատատեղեր | | | | Նոր ստեղծված աշխատա-տեղեր |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը, *մարդ* | ընդամենի նկատ-մամբ, % | բանվորա-կան մասնագի-տությամբ | ընդա-մենի նկատ-մամբ, % | |
| A-U | **Ընդամենը,** *այդ թվում՝* | **1 050** | **100** | **561** | **100** | **5** |
| A | Գյուղատնտեսություն | 23 | 2.2 | 19 | 3.4 | 0 |
| B-E | **Արդյունաբերություն** | **305** | **29.0** | **261** | **46.5** | **1** |
| F | Շինարարություն | 24 | 2.3 | 22 | 3.9 | 3 |
| G | Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում | 200 | 19.0 | 77 | 13.7 | 1 |
| H | Փոխադրումներ և պահեստային տնտեսություն | 3 | 0.3 | 1 | 0.2 | 0 |
| I | Կացության և հանրային սննդի կազմակերպում | 90 | 8.6 | 54 | 9.6 | 0 |
| J | Տեղեկատվություն և կապ | 10 | 1.0 | 4 | 0.7 | 0 |
| K | Ֆինանսական և ապահովագրական գործունեություն | 48 | 4.6 | 1 | 0.2 | 0 |
| L | Անշարժ գույքի հետ կապված գործունեություն | 13 | 1.2 | 3 | 0.5 | 0 |
| M | Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն | 15 | 1.4 | 0 | 0.0 | 0 |
| N | Վարչարարական և օժանդակ գործունեություն | 3 | 0.3 | 1 | 0.2 | 0 |
| O | Պետական կառավարում և պաշտպա-նություն, պարտադիր սոցիալական ապահովություն | 24 | 2.3 | 9 | 1.6 | 0 |
| P | Կրթություն | 41 | 3.9 | 12 | 2.1 | 0 |
| Q | Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում | 70 | 6.7 | 10 | 1.8 | 0 |

[1] Կրկնվող համարվում է թափուր այն աշխատատեղը, (զբաղմունքը) որի վերաբերյալ գործատուն հայտ է ներկայացրել հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ժամանակահատվածում և չի համալրվել (թափուր է):

| ՏԳՏԴ (խմբ. 2) | | Չկրկնվող թափուր աշխատատեղեր | | | | Նոր ստեղծված աշխատա-տեղեր |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը, *մարդ* | ընդամենի նկատ-մամբ, % | բանվորա-կան մասնագի-տությամբ | ընդա-մենի նկատ-մամբ, % | |
| R | Մշակույթ, զվարճություններ և հանգիստ | 38 | 3.6 | 22 | 3.9 | 0 |
| S | Սպասարկման այլ ծառայություններ | 143 | 13.6 | 65 | 11.6 | 0 |
| T | Տնային տնտեսությունների վարման ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| U | Օտարերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Աշխատուժի պահանջարկն ըստ տնտեսության հատվածների

Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտական կազմի

հունիս







Աշխատուժի առաջարկը, պահանջարկը և աշխատանքով ապահովվածները, հունիս



## Աշխատուժի պահանջարկն ըստ զբաղմունքի տեսակների[1], 2019թ. հունիս

*ամսվա վերջի դրությամբ*

| Կոդը | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը, *մարդ* |
|---|---|---|
| **1-9** | **Ընդամենը** | **3 583** |
| **1** | **Ղեկավարներ՝ օրենսդիր, գործադիր մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների, քաղաքական և հասարակական միավորումների** | **67** |
| 113 | Ղեկավարներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների | 1 |
| 121 | Ղեկավարներ՝ կազմակերպությունների և հիմնարկների | 4 |
| 122 | Ղեկավարներ՝ մասնագիտացված ստորաբաժանումների | 5 |
| 123 | Ղեկավարներ՝ գործառնական և այլ ստորաբաժանումների ու ծառայությունների | 45 |
| 131 | Ղեկավարներ՝ փոքր կազմակերպությունների | 12 |
| **2** | **Մասնագետներ՝ բարձր որակավորման** | **452** |
| 211 | Ֆիզիկոսներ, քիմիկոսներ և մասնագետներ՝ հարակից | 5 |
| 212 | Մաթեմատիկոսներ, վիճակագիրներ և մասնագետներ՝ հարակից | 9 |
| 213 | Մասնագետներ՝ համակարգիչների | 24 |
| 214 | Ճարտարապետներ, ճարտարագետներ և մասնագետներ՝ հարակից | 48 |
| 221 | Մասնագետներ՝ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների | 18 |
| 222 | Մասնագետներ՝ առողջապահության բնագավառի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության) | 204 |
| 223 | Մասնագետներ՝ բժշկական խնամքի և մանկաբարձության | 12 |
| 231 | Դասավանդողներ՝ համալսարանների, քոլեջների, արհեստագործական դպրոցների և այլ կրթական հաստատությունների | 8 |
| 232 | Դասավանդողներ՝ միջնակարգ դպրոցի | 37 |
| 233 | Դասավանդողներ՝ նախնական դպրոցի և նախադպրոցական կրթության | 6 |
| 234 | Դասավանդողներ՝ հատուկ կրթության բնագավառի | 5 |
| 235 | Մասնագետներ՝ այլ, կրթության բնագավառի | 21 |
| 241 | Մասնագետներ՝ ձեռնարկատիրական գործունեության և կադրերի | 8 |
| 242 | Մասնագետներ՝ իրավունքի բնագավառի | 4 |
| 243 | Մասնագետներ՝ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառների | 17 |
| 244 | Մասնագետներ՝ հասարակական և հարակից գիտությունների բնագավառների | 5 |
| 245 | Գործիչներ՝ գրականության և արվեստի | 21 |
| **3** | **Մասնագետներ՝ միջին որակավորման** | **261** |
| 311 | Տեխնիկներ՝ ֆիզիկայի և ճարտարագիտության բնագավառների | 8 |
| 312 | Աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման | 9 |
| 313 | Տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների | 8 |
| 315 | Տեսուչներ՝ շինարարության և անվտանգության (հրշեջ, տրանսպորտային միջոցների, արտադրական գործընթացների, արտադրանքի և արտադրության ) | 1 |
| 321 | Մասնագետներ՝ բնական գիտությունների բնագավառի | 2 |
| 322 | Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ միջին բժշկական անձնակազմի (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության) | 34 |
| 323 | Աշխատողներ (օժանդակ անձնակազմ)՝ բժշկական խնամքի և մանկաբարձության | 18 |
| 324 | Բուժարարներ և բուժողներ՝ ոչ ավանդական բժշկության | 3 |
| 331 | Դասավանդողներ՝ տարրական կրթության | 11 |
| 332 | Դասավանդողներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության | 11 |

[1] Դասակարգման հիմքը՝ Զբաղմունքների տեսակների ՀՀ դասակարգիչ:

| Կոդը | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը, *մարդ* |
|---|---|---|
| 333 | Դասավանդողներ՝ հատուկ կրթության | 1 |
| 341 | Աշխատողներ՝ ֆինանսների և առևտրի բնագավառների | 63 |
| 342 | Գործակալներ՝ առևտրական-առևտրային ծառայությունների | 27 |
| 343 | Աշխատողներ՝ վարչակառավարչական | 5 |
| 344 | Աշխատողներ՝ պետական ծառայությունների | 28 |
| 345 | Աշխատակիցներ՝ ոստիկանության, և խուզարկուներ | 15 |
| 346 | Աշխատողներ՝ սոցիալական ոլորտի | 1 |
| 347 | Աշխատողներ՝ արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների | 16 |
| **4** | **Ծառայողներ՝ գրասենյակների** | **176** |
| 411 | Օպերատորներ՝ ստեղնային մեքենաների, և քարտուղարներ | 28 |
| 412 | Ծառայողներ՝ թվային տեղեկատվություն մշակող | 11 |
| 413 | Ծառայողներ՝ զբաղված նյութեր և տրանսպորտ հաշվառելով | 4 |
| 414 | Աշխատողներ՝ գրադարանների, փոստային և այլ ծառայությունների | 4 |
| 421 | Գանձապահներ և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների | 71 |
| 422 | Ծառայողներ՝ զբաղված հաճախորդների իրազեկմամբ | 58 |
| **5** | **Աշխատողներ՝ սպասարկման ոլորտի, բնակարանային կոմունալ տնտեսությունների և առևտրի կազմակերպությունների** | **786** |
| 511 | Սպասարկողներ՝ ճամփորդությունների ընթացքում և հասարակական տրանսպորտում, աշխատողներ՝ հարակից զբաղմունքների | 41 |
| 512 | Սպասարկողներ՝ տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հանրային սննդի կազմակերպությունների | 201 |
| 513 | Աշխատողներ՝ անհատական ծառայություններ մատուցող, և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների | 107 |
| 514 | Աշխատողներ՝ այլ, անհատական ծառայություններ մատուցող | 83 |
| 516 | Աշխատողներ՝ քաղաքացիների և սեփականության պաշտպանության ծառայությունների | 3 |
| 522 | Վաճառողներ՝ խանութների, և ցուցադրողներ՝ ապրանքների | 261 |
| 523 | Վաճառողներ՝ տաղավարների և շուկաների | 38 |
| 531 | Աշխատողներ՝ քաղաքների և բնակավայրերի գազի մատակարարման կազմակերպությունների | 7 |
| 532 | Աշխատողներ՝ ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների | 9 |
| 533 | Աշխատողներ՝ կանաչապատման կազմակերպությունների | 33 |
| 534 | Աշխատողներ՝ էներգամատակարարման կազմակերպությունների | 3 |
| **6** | **Աշխատողներ՝ որակավորված՝ գյուղատնտեսական, անտառային, որսորդական, ձկնաբուծական և ձկնորսական կազմակերպությունների** | **28** |
| 611 | Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, բանջարանոցային, պտղատու և դաշտային մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների | 7 |
| 612 | Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անասնապահական ապրանքներ արտադրող կազմակերպությունների | 1 |
| 613 | Արտադրողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, գյուղատնտեսական մշակաբույսեր արտադրող կազմակերպությունների և անասնաբույծներ | 3 |
| 614 | Աշխատողներ՝ շուկայական կողմնորոշում ունեցող, անտառային և փայտամթերման կազմակերպությունների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների | 1 |
| 621 | Աշխատողներ՝ անձնական սպառման համար, գյուղատնտեսական, անտառային, որսորդական ձկնաբուծական և ձկնաբուծական ապրանքներ արտադրող | 16 |
| **7** | **Բանվորներ՝ որակավորված՝ արդյունաբերական կազմակերպությունների, գեղարվեստական արհեստների, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման** | **576** |
| 712 | Շինարար – տեղակայողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների | 20 |
| 713 | Բանվոր–հարդարողներ՝ շինարարական և շինվերանորոգման աշխատանքների, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների | 13 |

| Կոդը | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը, *մարդ* |
|---|---|---|
| 714 | Ներկարարներ, բանվորներ՝ շենքերի և շինությունների մակերևույթների մաքրման ու հարդարման, մասնագետներ՝ հարակից զբաղմունքների | 10 |
| 721 | Կաղապարողներ, եռակցողներ, դարբիններ, գրտնակողներ, նախապատրաստողներ՝ կառուցվածքային (կոնստրուկցիոն) մետաղի, և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների | 20 |
| 722 | Գործիքագործ - փականագործներ, հաստոցավարներ, կարգաբերողներ և մասնագետներ՝ հարակից զբաղմունքների | 31 |
| 723 | Մեքենագետներ՝ սարքավորումների, փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ | 20 |
| 724 | Փականագործ-հավաքողներ՝ էլեկտրական, էլեկտրամեխանիկական և ռադիոէլեկտրոնային սարքերի | 20 |
| 725 | Բանվորներ՝ արծնապատման, մետաղապատման և ներկման | 1 |
| 726 | Բանվորներ՝ օպտիկամեխանիկական արտադրության և հատուկ արտադրությունների | 1 |
| 727 | Բանվորներ՝ հղկանյութերի, սինթետիկ ալմաստների, գերկարծր նյութերի և դրանցից պատրաստվող արտադրատեսակների և բնական ալմաստների արտադրության | 27 |
| 728 | Բանվորներ՝ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության այլ արտադրությունների | 5 |
| 731 | Բանվորներ՝ մետաղի և համանման այլ նյութերի վրա ճշգրիտ աշխատանքների | 13 |
| 732 | Բրուտներ, մամլողներ, կաղապարողներ՝ ապակուց, խեցուց, ճենապակուց ևայլ նյութերից պատրաստված արտադրատեսակների, բանվորներ՝ հարակից մասնագիտությունների | 2 |
| 733 | Բանվորներ՝ գեղարվեստական արհեստների և գեղարվեստական արդյունաբերության այլ տեսակների արտադրությունների, բանվորներ՝մետաղից, փայտից, մանածագործվածքից և այլ նյութերից արտադրատեսակների պատրաստման և վերականգնման | 7 |
| 734 | Բանվորներ՝ գրահրատարակչական արտադրության | 2 |
| 741 | Բանվորներ՝ սննդի արդյունաբերության | 193 |
| 742 | Բանվորներ՝ փայտամշակման արդյունաբերության | 22 |
| 743 | Բանվորներ՝ մանածագործական արդյունաբերության | 84 |
| 744 | Մորթեգործներ, կաշեգործներ և կոշկակարներ | 43 |
| 745 | Բանվորներ՝ շինարարական նյութերի արդյունաբերության | 19 |
| 751 | Բանվորներ՝ տրանսպորտի բնագավառի | 14 |
| 752 | Բանվորներ՝ կապի բնագավառի | 9 |
| **8** | **Օպերատորներ, ապարատավարներ, մեքենաներ, փականագործ-հավաքողներ՝ մեքենաների և կայանքների** | **186** |
| 811 | Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ հանքաքարի արդյունահանման և հարստացման կայանքների | 3 |
| 812 | Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և այլ մասնագետներ՝ մետաղահալ կայանքների | 1 |
| 813 | Օպերատորներ՝ ապակու և ապակե, ճենապակե և կերամիկական իրերի, երեսպատման ու կապակցող նյութերի արտատդրության ու թրծման կայանքների և վառարանների | 1 |
| 814 | Օպերատորներ և ապարատավարներ՝ փայտանյութի մշակման և վերամշակման, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի, ֆիբրի և դրանցից պատրաստված իրերի արտադրության կայանքների | 11 |
| 815 | Ապարատավարներ, օպերատորներ և մեքենավարներ՝ քիմիական և նավթաքիմիական հումքի վերամշակման կայանքների | 8 |
| 816 | Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ էլեկտրակայանների և ցանցերի կայանքների | 4 |
| 817 | Օպերատորներ՝ ավտոմատ հավաքման գծերի և արդյունաբերական ռոբոտների | 3 |
| 821 | Օպերատորներ, մեքենավարներ՝ մետաղի և հանքային հումքի վերամշակման մեքենաների և սարքավորումների | 1 |
| 822 | Օպերատոներ, մեքենավարներ և ապարատավարներ՝ քիմիական արտադրանքի արտադրության մեքենաների և սարքավորումների | 13 |
| 824 | Օպերատորներ՝ փայտամշակման սարքավորումների | 5 |

| Կոդը | Ցուցանիշի անվանումը | Ընդամենը, *մարդ* |
|---|---|---|
| 825 | Օպերատորներ և մեքենավարներ՝ տպագրական և կազմարարական մեքենաների | 1 |
| 826 | Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների | 28 |
| 827 | Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝ սննդամթերքի և համանման այլ մթերքների մշակման սարքավորումների | 4 |
| 828 | Փականագործ-հավաքողներ | 6 |
| 829 | Օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ և փականագործ –հավաքողներ՝ անշարժ սարքավորումների, այլ խմբեր չներառված | 11 |
| 831 | Մեքենավարներ՝ գնացքաքարշերի և բանվորներ՝ հարակից զբաղմունքների | 1 |
| 832 | Վարորդներ՝ ավտոմոտորանսպորտի | 82 |
| 833 | Օպերատորներ և մեքենավարներ՝ գյուղատնտեսական, հողափոր, ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման այլ շարժական սարքավորումների | 3 |
| **9** | **Բանվորներ՝ որակավորում չունեցող** | **1 051** |
| 911 | Վաճառողներ՝ փողոցում, և համանման այլ աշխատողներ | 31 |
| 912 | Մաքրողներ՝ կոշիկի, և աշխատողներ՝ փողոցում տարբեր ծառայություններ մատուցող | 7 |
| 913 | Սպասավորներ՝ տնային, հավաքարարներ՝ բնակարանների և աշխատողներ՝ հարակից զբաղմունքների | 204 |
| 914 | Աշխատողներ՝ շենքերի սպասարկման, պատուհանների լվացման և համանման այլ աշխատանքների | 43 |
| 915 | Ցրիչներ, բեռնակիրներ, դռնապաններ և աշխատողներ՝ հարակից այլ զբաղմունքների | 38 |
| 916 | Հավաքողներ՝ աղբի, և համանման այլ աշխատողներ | 69 |
| 917 | Աշխատողներ՝ պատվեր ընդունող, սպասարկման ոլորտի կազմակերպություններում | 73 |
| 921 | Բանվորներ՝ գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձկնորսության և հարակից այլ ոլորտների | 79 |
| 931 | Բանվորներ՝ լեռնարդյունահանման արդյունաբերության, շինարարության, երկրաբանության և ընդերքի հետախուզման | 49 |
| 932 | Բանվորներ՝ մշակման արդյունաբերության | 406 |
| 933 | Բանվորներ՝ տրանսպոտի և կապի ոլորտի և բեռնակիրներ | 52 |

## Աշխատանքի տեղավորվածներն ըստ սեռի, 2019թ.

*ամսվա վերջի դրությամբ*

| | Ընդամենը, *մարդ* | | | 2018թ. նույն ամսվա նկատմամբ, % | | | Աշխատանք փնտրողների նկատմամբ, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ընդամենը | կին | տղամարդ | ընդամենը | կին | տղամարդ | ընդամենը | կին | տղամարդ |
| Հունվար | 681 | 454 | 227 | 104.6 | 105.6 | 102.7 | 0.8 | 0.8 | 0.8 |
| Փետրվար | 770 | 537 | 233 | 85.4 | 92.6 | 72.4 | 0.9 | 1.0 | 0.8 |
| Մարտ | 1 087 | 728 | 359 | 124.4 | 134.1 | 108.5 | 1.3 | 1.3 | 1.3 |
| Ապրիլ | 1 092 | 704 | 388 | 117.5 | 116.4 | 119.8 | 1.3 | 1.3 | 1.4 |
| Մայիս | 1 084 | 690 | 394 | 116.7 | 114.0 | 121.6 | 1.3 | 1.3 | 1.4 |
| Հունիս | 1 198 | 773 | 425 | 123.3 | 111.9 | 151.2 | 1.5 | 1.4 | 1.5 |